ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

19 դեկտեմբերի 2016 թվականի **թիվ 32** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից «Կրթության միջազգային ստանդարտ դասակարգումը (ԿՄՄԴ 2011)» միջազգային ստանդարտը կիրառելու մասին

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան, մասնագիտական կրթության մակարդակները բնութագրող ցուցանիշների համադրելիությունն ապահովելու նպատակներով «Եվրասիական տնտեսական միության պաշտոնական վիճակագրական տեղեկությունների ձեւավորման եւ տարածման կարգի մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 4 հավելված) 12-րդ կետին համապատասխան՝

հանձնարարում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին՝ «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝ Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում, սույն Հանձնարարականը հրապարակելու օրվանից ապահովել դրանց լիազոր մարմինների կողմից «Կրթության միջազգային ստանդարտ դասակարգումը (ԿՄՄԴ 2011)» միջազգային ստանդարտի կիրառումը, որի ռուսերեն տեքստը տեղադրված է «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝

Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում՝ հետեւյալ հասցեով՝ http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/info/Pages/classification.aspx.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան